**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի չորրորդ մասով>>

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 18-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Կողմ-6

Պ.Հովհաննիսյան
Վ.Հովհաննիսյան
Ա.Ներսիսյան
Ն.Կակոսյան
Գ.Գրիգորյան
Ա.Սարգսյան

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թ-ի հունվարի 18-ի թիվ 1 նիստ

ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
18-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ

# ՕՐԱԿԱՐԳ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1.Մյասնիկյան համայնքի 2011թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
2.Մյասնիկյան համայնքի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցի հաստատման մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
3.Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
4.Համայնքի ջրագծերի կապիտալ վերանորոգման համար գումար հատկացնելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
5.Համայնքում երիտասարդական միջոցառում իրականացնելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
6.Դրամական օգնություն հատկացնելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
7.Շախմատի սեղաններ ձեռք բերելու համար գումար հատկացնելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան
8. Մյասնիկյան համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման կազմը հաստատելու մասին.
Զեկուցող՝ Ա.Պետրոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 01-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-Ի Ն-03 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հնրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 22 -ի <<Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի բյուջեն հաստատելու մասին>> Ն- 03 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1) տարեկզբի վարչական մասի 8349,4 հազար դրամ ազատ մնացորդը ուղղել`
09-1-1 հատվածի 4637 հոդվածին` 152,0 հազար դրամ
04-2-4 հատվածի 5113 հոդվածին` 7663,5 հազար դրամ
08-1-1 հատվածի 5122 հոդվածին` 390,0 հազար դրամ
01-6-1 հատվածի 5121 հոդվածին` 295,9 հազար դրամ
ֆոնդային մասի տարեկզբի ազատ մնացորդը ուղղել`
01-6-1 հատվածի 5121 հոդվածին ` 1162,8 հազար դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ______
Վ.Հովհաննիսյան ______
Ա.Ներսիսյան ______
Ն.Կակոսյան ______
Գ.Գրիգորյան ______

Ա.Սարգսյան

Կ.Տ.
Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թ-ի հունվարի 18-ի թիվ 1 նիստի
01-Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Թիվ-02

### ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի 2012 թվականի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ______
Վ.Հովհաննիսյան ______
Ա.Ներսիսյան ______
Ն.Կակոսյան ______
Գ.Գրիգորյան ______
Ա.Սարգսյան ______

Կ.Տ. Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թ-ի հունվարի 18-ի թիվ 1 նիստի
02 որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2012ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ 02 ՈՐՈՇՄԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| N | Ավագանու նիստեր | Ամիս | Ամսաթիվ |
|---|---|---|---|
| 1. | Թիվ 1 նիստ | հունվար | 18 |
| 2. | Թիվ 2 նիստ | մարտ | 19 |
| 3. | Թիվ 3 նիստ | մայիս | 21 |
| 4. | Թիվ 4 նիստ | հուլիս | 19 |
| 5. | Թիվ 5 նիստ | սեպտեմբեր | 19 |
| 6 | Թիվ 6 նիստ | նոյեմբեր | 20 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

---

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյանի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ____________

Վ.Հովհաննիսյան ____________

Ա.Ներսիսյան ____________

Ն.Կակոսյան ____________

Գ.Գրիգորյան ____________

Ա.Սարգսյան ____________

Վ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1 նիստի 03-Ն որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 Թ-Ի
ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 1 ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ
N 03- Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Համայնքի ղեկավարի աշխատակազմը բնակչության բարեկեցության բարելավման և համայնքային խնդիրները լուծելու նպատակով կատարել է որոշակի աշխատանքներ.*

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության մասնակցած քաղաքացիների թիվը՝ 275
Համայնքի ավագանու մոտ ընդունելության մասնակցած քաղաքացիների թիվը՝ 35
Ստացված գրությունների թիվը՝ 126
Պատասխանված գրությունների թիվը՝ 175
Համայնքի ղեկավարի ընդունած որոշումների թիվը՝ 20
համայնքի ղեկավարի արձակած կարգադրությունների թիվը՝ 24

## 1. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,ՄՇԱԿՈՒՅԹ,ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

1.1 աշխատակազմը կազմակերպել է համայնքի ենթակայության՝մանկապարտեզի, կուլտուրայի տան,գրադարանի,երաժշտական դպրոցի գործունեությունը:

1.2.մայիսի 1-ից վերաբացվել է մանկապարտեզը ,որտեղ գործում է 4 խումբ՝ 95 երեխաներով.

1.3.աշխատակազմը աջակցել է դպրոցի գործունեության և գեղարվեստական գործունեության զարգացմանը.
համայնքի կողմից դպրոցին նվիրաբերվել է 1081,0 հազար դրամ գումարի դպրոցական գույք.

1.4.համայնքի և Հայաստանի Մանուկներ հիմնադրամի միջև կնքվել է միջնակարգ դպրոցի շենքի շինարարական աշխատանքների ներդրումային ծրագիրը և լայնածավալ սկսվել վերանորոգման և շենքային, գույքային պայմանների բարելավման աշխատանքները.
նոյեմբերի վերջին շահագործման է հանձնվել համայնքի միջնակարգ դպրոցը՝

անբողջովին վերանորոգված և կահավորված.

1.5.կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի հետ կապված երիտասարդական միջոցառումներ,սպորտային խաղեր. Համայնքը մասնակցել է Մեծամոր քաղաքում կայացած Ռուդիկ Դեմիրճյանի սպորտային հուշամրցաշարին:

1.6.համայնքը աջակցել է <<Ազրոլրատու>> ,<<Հայրենականչ>> , <<Շրջադարձ>> <<Հայֆերմեր>> ,<<Արտակարգ>> թերթերի հրապարակման և տարածման համար , ինչպես նաև համագործակցել համայնքում կատարվող սոցիալ-հոգեբանական օգնության ծրագրի իրականացմանը,որի արդյունքում ի հայտ է եկել խնդիրներ ունեցող բազմաթիվ երեխաներ.

## 2.ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2.1.աշխատակազմը աջակցել է համայնքի գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, համայնքի անապահով ընտանիքներին հատկացվել է դրամական օգնություն՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար.

2.2 կազմվել է հանձնաժողով՝ համայնքի գյուղացիական տնտեսությունների անասունների հաշվառման և կատարված ցանքի գրանցման վերաբերյալ. Ընթացիք տարվա ընթացքում կատարվել է 85,5 հա հողատարածքի ցանք՝ բանջարա-բոստանային կուլտուրաներով.

2.3 համայնքում ոռոգման ջրագծերի ընթացիկ վերանորոգման աշխատանքների կատարման համար <<Քարակերտ>> ՋՕ ընկերությանը հատկացվել է 1000,0 հազար դրամ գումար ներդրում և իրականացվել ջրագծերի գարնան վերանորոգման,մաքրման աշխատանքներ.

2.4 համայնքում իրականացվել է խոշոր և մանր եղջերավոր անասունների պատվաստման աշխատանքներ.

2.6կազմակերպվել է տեղեկատվական, խորհրդատվական աշխատանքների ծրագիր՝ պտուղ-բանջարեղենի ճիշտ մշակման և բուժման ուղղություններով. ընթացիկ տարում արտադրվել է մոտ 50 տոննա ծիրանի բերք և 150 տոննա հացահատիկի և գարու բերք.

2.7համայնքի բյուջեից 2400,0 հազար դրամ հատկացվել է ոռոգման ցանցի նախագծահետազոտական աշխատանքներ կատարելու համար.

2.8հաշվառվել և կազմվել է 2011 թվականի հողային հաշվեկշիռը,կազմակերպվել է հողերի վարձավճարների հաշվարկման և հավաքագրման աշխատանքներ. Վարձակալությամբ և աճուրդային եղանակով հողեր չի տրամադրվել. աշխատակազմի կողմից ուսումնասիրվել ,պարզաբանվել և օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվել գյուղատնտեսության վերաբերյալ շուրջ 28 դիմումների.

## 3.ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

3.1 կոմունալ տնտեսության բնագավառում իրականացվել է աղբաթափման և սանիտարական մաքրման կանոնավոր աշխատանքներ.
3.3 համայնքի գլխավոր փողոցներում իրականացվել է լույսերի ընթացիկ նորոգման և լամպերի տեղադրման աշխատանքներ ,որի արդյունքում փողոցները լուսավորվել է.
3.4 իրականացվել է համայնքի խորքային հորերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ.
3.5 ամբողջովին վերանորոգվել է համայնքի թիվ 2 բազմաբնակարանային (թվով 24 բնակիչների համար) շենքի տանիքը , որը վտանգավոր պայմաններ էր ստեղծել բնակիչների համար.
3.6 համայնքին նվիրաբերվել է վարչական շենք ,որը օրինականացվել է և ամբողջովին սկսվել է վերանորոգման աշխատանքներ՝ վերանորոգվել է տանիքը,տեղադրվել է նոր դռներ և պատուհան , շարունակվում է ներքին հարդարման աշխատանքները:
3.72011 թվականի ապրիլ ամսին համայնքը կնքել է եռակողմ ներդրումային պայմանագիր՝ մարզադահլիճի կապիտալ վերանորոգման համար : Համայնքի բյուջեից 2000,0 հազար դրամ գումար է հատկացվել <<Շեն>> ԲՀԿ-ին ,որպես ներդրում և լայնածավալ սկսվել վերանորոգման աշխատանքները:
Տարվա վերջին շահագործման է հանձնվել մարզադահլիճը վերանորոգված և նոր մարզագույքով:

## 4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

4.1 աշխատակազմը կազմակերպել և միջոցառումներ է ձեռնարկել հիվանդների, սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ.
դրամական օգնություն է տրամադրվել պատերազմի վետերանների,վիրահատման և բուժման կարիք ունեցողների, սոցիալապես անապահովների.
Դրամական օգնություն է հատկացվել 2011թվականի հունիսի 5-ին Մյասնիկյան գյուղական համայնքի վարչական տարածքում տեղացած կարկտի պատճառած վնասի հետևանքով տուժած գյուղացիական տնտեսությունների:
4.2 աշխատակազմը աջակցել է զորակոչին,զորահավաքներին և ուսումնավարժական հավաքներին.

Տեղական ինքնակառավարման և նրա ենթակա կազմակերպությունների գծով ծախսվել է աշխատավարձ՝ 19695,3 հազար դրամ, սոց-վճար՝ 3772,1հազար դրամ. Բյուջեի եկամուտները առաջացել է հողի հարկի ,գույքահարկի,հատկացված դոտացիայի և այլ եկամուտների հաշվին.

2011թվականի ընթացքում մուտքագրվել է՝

-հողի հարկ- 7344,7 հազար դրամ
-գույքահարկ ֆիզ.անձանցից-2614,6 հազար դրամ
-գույքահարկ իրավաբ.անձանցից-29,7 հազար դրամ
-տեղական տուրք-449,5 հազար դրամ
-այլ ոչ հարկային եկամուտներ-160,0 հազար դրամ
-վարձակալական հողերի վարձավճար -663,6 հազար դրամ

Ընդանուր բյուջեն կատարվել է 100,2 % -ով,սեփական եկամուտների գծով 100,9%-ով.

*Մյասնիկյան համայնքում ստեղծված նոր աշխատատեղերի և համայքի աշխատակազմի կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ որոշակիորեն բարելավել է բնակչության սոցիալ-տնտեսական, կոմունալ և կրթական պայմանները.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի բյուջեից 7663,5 հազար դրամ գումար հատկացնել <<Քարակերտ>> ՋՕԸ-ին համայնքի երրորդ կարգի ջրագծերի կապիտալ վերանորոգման համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ____________
Վ.Հովհաննիսյան ____________
Ա.Ներսիսյան ____________
Ն.Կակոսյան ____________
Գ.Գրիգորյան ____________
Ա.Սարգսյան ____________

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ ____________ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1
նիստի 04 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի բյուջեից 200,0 հազար դրամ գումար հատկացնել համայնքում բանակի 20-ամյակի կապակցությամբ միջոցառում անցկացնելու համար և 315,0 հազար դրամ հատկացնել Կարեն Դեմիրճյանի մարզահամալիրում կայանալիք միջոցառմանը մասնակցելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ______

Վ.Հովհաննիսյան ______

Ա.Ներսիսյան ______

Ն.Կակոսյան ______

Գ.Գրիգորյան ______

Ա.Սարգսյան ______

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1 նիստի 05 որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

### ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի բյուջեից 150,0 հազար դրամ գումար տրամադրել թվով երեք սոցիալապես անապահով ընտանիքների , որպես դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ____________
Վ.Հովհաննիսյան ____________
Ա.Ներսիսյան ____________
Ն.Կակոյան ____________
Գ.Գրիգորյան ____________
Ա.Սարգսյան ____________

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1
նիստի 06 որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2012Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ
06 ՈՐՈՇՈՒՄԻՑ

# ՑՈՒՑԱԿ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Մաղաքյան Միսակ - 70000 դրամ
2. Մանգուշյան Գևորգ - 40000 դրամ
3. Պապիկյան Վարդան - 40000 դրամ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Համայնքի բյուջեից 390,0 հազար դրամ գումար հատկացնել շախմատի սենյակի համար շախմատի սեղաններ ձեռք բերելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-6

Պ.Հովհաննիսյան

Վ.Հովհաննիսյան

Ա.Ներսիսյան

Ն.Կակոսյան

Գ.Գրիգորյան

Ա.Սարգսյան

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1 նիստի 07 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում <<Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի ,,գ,, ենթակետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղական համայնքի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-6

Պ.Հովհաննիսյան ______

Վ.Հովհաննիսյան ______

Ա.Ներսիսյան ______

Ն.Վակոսյան ______

Գ.Գրիգորյան ______

Ա.Սարգսյան ______

Կ.Տ Համայնքի ղեկավար՝ Ա.Պետրոսյան

2012թվականի հունվարի 18-ի թիվ 1 նիստի 08 որոշման

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի
ԹԻՎ 8 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԸ

1.Հովհաննիսյան Վահրամ Սանասարի
2.Կակոսյան Նորիկ Թոռունի